ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 սեպտեմբերի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

108
(3317)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ArmLur.am-ը տեղեկացրել էր, որ առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Գասպարյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, իսկ համակարգում կրկին նշանակվել է Լենա Նանուշյանը:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ Գասպարյանի ազատման որոշումը առողջապահական համակարգում անակնկալ է եղել: Ավելին՝ ըստ մեր տեղեկությունների՝նախարարության ներսում եւս այդ որոշումը բավական անսպասելի է ընկալվել: Բժշկական համայնքում, մեր աղբյուրների պնդմամբ, հարց է առաջացել, թե ինչու է ոլորտում երկար տարիների մասնագիտական փորձ ունեցող բժշկին փոխարինելու որոշում կայացվել:

Արմեն Գասպարյանը մասնագիտությամբ մանկաբարձ-գինեկոլոգ է եւ տարիներ շարունակ աշխատել է բժշկական համակարգում:

Այժմ, սակայն, իշխանությունը որոշել է փոխել նախարարության փոխնախարարական կազմը: Եւ այստեղ ուշագրավ է այն, որ Լենա Նանուշյանի պաշտոնավարման շուրջ եւս վերջին օրերին կտրուկ փոփոխություններ էին տեղի ունեցել. օգոստոսի 28-ին վարչապետի որոշմամբ նա ազատվել էր առողջապահության նախարարի առաջին տեղակալի պաշտոնից:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ Նանուշյանի վերադարձը նախարարության ղեկավար կազմ եւ Արմեն Գասպարյանի ազատումը բժշկական համայնքում բազմաթիվ հարցեր են առաջացրել: Թե հատկապես ինչն է եղել Գասպարյանի պաշտոնանկության պատճառը, պաշտոնական որոշման մեջ չի մանրամասնվում: ⇨ էջ 2

Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) երկօրյա գագաթնաժողովը Բիշքեկում անցկացվում է միջազգային լարվածության եւ աշխարհաքաղաքական վերադասավորումների պայմաններում: Գագաթնաժողովին մասնակցում են Չինաստանի նախագահ Սի Ցզինպինը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդին, Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը եւ մի շարք այլ երկրների ղեկավարներ: Գագաթնաժողովի շրջանակում Բիշքեկում երեկ հանդիպել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Նրանց հանդիպումը տեղի է ունեցել ՇՀԿ գագաթնաժողովի շրջանակում: ՇՀԿ-ի օրակարգում լինելու են ԱՄՆ-ի եւ Իսրայելի պատերազմը Իրանի դեմ, ռուս-ուկրաինական պատերազմը, ինչպես նաեւ Աֆղանստանի տնտեսական եւ սոցիալական իրավիճակը: Ռուսաստանի եւ Թուրքիայի առաջնորդների առանձին հանդիպման ժամանակ նախատեսվում է քննարկել նաեւ Ուկրաինայի հարցը եւ Սեւ ծովում ստեղծված իրավիճակը: Իրանի նախագահ Փեզեշքիանն էլ հանդիպելու է Պուտինի հետ: ՇՀԿ-ն նախկինում հանդես է եկել Իրանի դեմ ուժի կիրառման դատապարտմամբ եւ հակամարտությունների՝երկխոսության ու միջազգային իրավունքի հիման վրա խաղաղ կարգավորման օգտին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



ՆԱՏՕ-ն նախատեսում է ռեկորդային՝ 40 մլրդ դոլար ներդնել հակադրոնային տեխնոլոգիաների զարգացման համար: Այս մասին «ՌԻԱ Նովոստի»-ին հայտնել է Բելգիայում Ռուսաստանի դեսպան Դենիս Գոնչարը: «ՆԱՏՕ-ի անդամ երկրները հակադրոնային տեխնոլոգիաների վրա մտադիր են աննախադեպ գումարներ՝40 մլրդ դոլար, ներդնել»,- ասել է ռուս դիվանագետը: Գոնչարը նաեւ նշել է, որ ՆԱՏՕ-ն սկսել է նոր՝բարձր ճշգրտության եւ մեծ հեռահարության համակարգերի մշակման նախագիծ: Նրա խոսքով՝ 2026 թվականին դաշինքը նախատեսում է գրեթե կրկնապատկել հրետանային արկերի արտադրությունը նախորդ տարվա համեմատ: «Գրեթե ամեն օր արեւմտյան երկրները հայտարարում են նոր բազմամիլիոնանոց ռազմական պայմանագրերի եւ նախագծերի մասին»,- ասել է Ռուսաստանի դեսպանը: Գոնչարը նախկինում հայտարարել էր նաեւ, որ ՆԱՏՕ-ի ռազմականացման տնտեսական օգուտների մասին դաշինքի պաշտոնյաների հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը: Նրա պնդմամբ՝ռազմականացման հետեւանքով վնաս է հասցվում տարածաշրջանի խաղաղ զարգացմանն ու անդամ երկրների քաղաքացիների սոցիալ-տնտեսական բարեկեցությանը:

Իշխանական շրջանակներում կարծես թե որոշում կա «Ուժեղ Հայաստան» խմբակցության ամենաքաղաքականացված ու սուր պատգամավոր Էդգար Ղազարյանի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Իշխանական որոշ շրջանակներ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Ղազարյանի հարցը լուծված են համարում ոչ թե քաղաքական, այլ դատական ճանապարհով: Բանն այն է, որ Էդգար Ղազարյանի նկատմամբ արդեն իսկ կայացվել է մեղադրական վերդիկտ: Օգոստոսի 6-ին հրապարակված տեղեկությունների համաձայն՝դատարանը Ղազարյանին մեղավոր է ճանաչել Սահմանադրական դատարանի դատավորների վերաբերյալ հրապարակումների գործով: Սակայն այս փուլում խոսքը դեռ վերջնական դատավճռի մասին չէ. դատարանը պետք է շարունակի դատական գործընթացը եւ որոշի պատժաչափը, իսկ կայացված վերդիկտը ենթակա է բողոքարկման: Հենց այս հանգամանքն էլ քաղաքական շրջանակներում հարցեր է առաջացնում: Եթե հետագայում կայացվի եւ օրինական ուժի մեջ մտնի այնպիսի դատական ակտ, որը հանգեցնի պատգամավորական մանդատի դադարեցման իրավական հիմքի առաջացմանը, ապա Ղազարյանը կարող է կանգնել խորհրդարանից հեռանալու փաստի առաջ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԿԻԶԲՆ Է, ՈՉ ԹԵ ՎԵՐՋԸ

ArmLur.am-ի զրուցակիցը արժանապատիվ տեր Թովմաս քահանա Կարապետյանն է:

- Տեր հայր, այսօր հասարակությունը կարծես բաժանված է տարբեր հատվածների, սակայն կարող ենք վստահաբար ասել, որ շատերը շարունակում են իրենց եւ իրենց երեխաների կյանքում կարեւորել Հայ առաքելական սուրբ եկեղեցին: Շատերը ցանկանում են մկրտվել կամ մկրտել իրենց երեխաներին, սակայն հաճախ մկրտության խորհուրդը լիարժեք չեն ընկալում: Ի՞նչ է, ըստ Ձեզ, մկրտությունը, եւ ի՞նչ խորհուրդ ունի այն:

- Մկրտությունը դեպի երկինք մեր հոգեւոր վերընթացի առաջին քայլն է, առաջին աստիճանը: Մկրտությամբ մենք պարտավորվում ենք մեր հոգեւոր միտքը հառել դեպի Աստված եւ մեր յուրաքանչյուր քայլը կատարել պատասխանատվությամբ: Մկրտված մարդը, որպես քրիստոնյա, դառնում է Եկեղեցու մի մասնիկը՝ կարծես մի քարն այն Սուրբ եկեղեցու, որին կոչված ենք ծառայելու: Մենք անդամագրվում ենք Եկեղեցուն, դառնում Աստծո որդեգիր, ժառանգակից եւ Սուրբ հոգու տաճար: Այսօր մեր հասարակության մեջ շատ բաժանումներ կան: «Սատանա» բառը հունարենում հենց «բաժանող» իմաստն ունի, մինչդեռ միության բերողը Քրիստոս Աստված է: Եկեղեցին եւս միության եւ ընդհանրության խորհուրդ ունի՝ մեկ Եկեղեցի, մեկ մկրտություն, մեկ Աստված, ինչպես դավանում ենք մեր հավատամքում: Ուստի քրիստոնյա լինելը նշանակում է ոչ միայն մկրտվել, այլեւ գիտակցաբար ստանձնել այն պարտականությունները, որոնք վերցնում ենք մկրտության խորհրդով: Մկրտությունը սկիզբն է, ոչ թե վերջը: Այն առաջին քայլն է երկար ճանապարհի:

- Իսկ մկրտությունից հետո ինչպե՞ս պետք է ապրի քրիստոնյան:

- Եթե քրիստոնեությունը մեզ կոչում է Քրիստոսին մեր մեջ ընդունելու, ապա մկրտությամբ մենք ընդունում ենք Քրիստոսին, որդեգրվում Աստծուն: Եւ եթե Քրիստոս ապրում է մեր մեջ, մենք պարտավոր ենք խնամել այդ կենդանի ներկայությունը եւ այն փոխանցել այն մարդկանց, ում սիրում ենք: Մենք պարտավորություն ունենք՝ որպես զավակներ՝ մեր ծնողների հանդեպ, որպես ծնողներ՝ մեր զավակների հանդեպ, եւ ընդհանրապես՝ միմյանց նկատմամբ: Ծնող դառնալով՝ մենք ունենք սրբազան պարտականություն՝ կրթելու եւ դաստիարակելու մեր զավակներին՝ այդ Աստծո պարգեւը, որը լույս աշխարհ է եկել: Այդ դաստիարակության առաջին քայլերից մեկը մկրտությունն է: Երբ երեխա ենք ունենում, փորձում ենք նրան լավագույն հագուստը տալ, լավագույն կերակուրը, ապահովել առողջ միջավայր: Բայց կա նաեւ ներքին՝ հոգեւոր կողմը: Մկրտության սուրբ ավազանին տանելով՝ մենք նրան հոգեւոր սնունդ, ապահովություն եւ խաղաղություն ենք տալիս: Սակայն միայն մկրտության վկայական ստանալով մարդը չի դառնում քրիստոնյա եւ դրանով ամեն ինչ չի ավարտվում: Եթե մենք քրիստոնյա ենք, մեր երեխաներին եւս պետք է դաստիարակենք քրիստոնեական ոգով:

Քրիստոնեության մեջ տեղ չունի ուրիշին խոսքով, մտքով կամ գործով նեղացնելը, վիրավորելը: Ինչպես Ներսես Շնորհալին է ասում, մեր բարի եւ չար գործերը խոսքով, մտքով ու գործով են լինում: Մենք պետք է երեխաներին սովորեցնենք, որ նույնիսկ ուրիշի մասին վատ մտածելը մեղք է, առավել եւս՝ այդ միտքը խոսքով արտահայտելը կամ գործով իրականացնելը: Եվ այստեղ ամենակարեւորն օրինակն է: Եթե մեր խոսքը գործով չի դրսեւորվում, այն մոռացվում է: Լավագույն օրինակը մեր սեփական վարքն է, մեր կերպարը: Եթե մենք բարին ենք գործում, չենք նեղացնում եւ հարգում ենք մյուսին, դրանով իսկ կրթում ու դաստիարակում ենք մեր երեխաներին եւ մեր շրջապատի մարդկանց:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԻՆՉՈՒ ԱԶԱՏՎԵՑ ԱՐՄԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

ArmLur.am-ը տեղեկացրել էր, որ առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Գասպարյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից, իսկ համակարգում կրկին նշանակվել է Լենա Նանուշյանը:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ Գասպարյանի ազատման որոշումը առողջապահական համակարգում անակնկալ է եղել: Ավելին՝ ըստ մեր տեղեկությունների՝ նախարարության ներսում եւս այդ որոշումը բավական անսպասելի է ընկալվել: Բժշկական համայնքում, մեր աղբյուրների պնդմամբ, հարց է առաջացել, թե ինչու է ոլորտում երկար տարիների մասնագիտական փորձ ունեցող բժշկին փոխարինելու որոշում կայացվել:

Արմեն Գասպարյանը մասնագիտությամբ մանկաբարձ-գինեկոլոգ է եւ տարիներ շարունակ աշխատել է բժշկական համակարգում:

Գասպարյանը ծնվել է 1983 թվականին Երեւանում: 2001-2006 թվականներին գերազանցությամբ ավարտել է Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, այնուհետեւ՝ 2006-2010 թվականներին, կլինիկական օրդինատուրա է անցել «Մանկաբարձություն եւ գինեկոլոգիա» մասնագիտությամբ:

Նրա աշխատանքային գործունեությունը հիմնականում կապված է եղել Մոր եւ մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի հետ: 2010-2023 թվականներին Գասպարյանն այնտեղ աշխատել է որպես բժիշկ մանկաբարձ-գինեկոլոգ, իսկ 2014-2023 թվականներին եղել է գլխավոր բժշկի տեղակալ: 2018-2023 թվականներին զբաղեցրել է կենտրոնի փոխտնօրենի պաշտոնը:

Գասպարյանը նաեւ զբաղվել է բժշկական կրթությամբ: 2021-2023 թվականներին նա Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետբուհական եւ շարունակական կրթության ֆակուլտետի մանկաբարձության, գինեկոլոգիայի եւ վերարտադրողական բժշկության ամբիոնի դոցենտ է եղել: Բացի այդ, 2022-2023 թվականներին սովորել է ՀՊՏՀ-ի «Առողջապահության կառավարում եւ վարչարարություն» մագիստրոսական ծրագրում:

Հատկանշական է նաեւ, որ Գասպարյանը զինվորական ծառայություն է անցել 2015-2017 թվականներին՝ Ջաբրայիլի «Մեխակավան» հոսպիտալում՝ որպես թերապեւտիկ բաժանմունքի ավագ օրդինատոր:

2023 թվականի սեպտեմբերի 5-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Արմեն Գասպարյանը նշանակվել էր առողջապահության նախարարի տեղակալ:

Այսպիսով՝ Գասպարյանի մասնագիտական կենսագրությունը հիմնականում բժշկությունից է գալիս՝ ի տարբերություն զուտ վարչական կարիերա անցած պաշտոնյաների: Նրա պաշտոնավարման ընթացքում նա նախարարությունում պատասխանատու է եղել մի շարք կարեւոր ուղղությունների համար:

Այժմ, սակայն, իշխանությունը որոշել է փոխել նախարարության փոխնախարարական կազմը: Եւ այստեղ ուշագրավ է այն, որ Լենա Նանուշյանի պաշտոնավարման շուրջ եւս վերջին օրերին կտրուկ փոփոխություններ էին տեղի ունեցել. օգոստոսի 28-ին վարչապետի որոշմամբ նա ազատվել էր առողջապահության նախարարի առաջին տեղակալի պաշտոնից:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ այժմ Նանուշյանի վերադարձը նախարարության ղեկավար կազմ եւ Արմեն Գասպարյանի ազատումը բժշկական համայնքում բազմաթիվ հարցեր են առաջացրել: Թե հատկապես ինչն է եղել Գասպարյանի պաշտոնանկության պատճառը, պաշտոնական որոշման մեջ չի մանրամասնվում:

Մինչդեռ առողջապահության համակարգում շատերի համար հարցը մնում է նույնը՝ ինչո՞ւ է մասնագիտական բժշկական մեծ փորձ ունեցող Արմեն Գասպարյանը հեռացվում համակարգից, եւ ի՞նչ նոր տրամաբանությամբ է ձեւավորվում առողջապահության նախարարության ղեկավար կազմը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ի՞ՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ԱԼԻԵՎԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը օգոստոսի 31-ին Բիշքեկում հանդիպել են Շանհայի համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի շրջանակում: Հանդիպման մասին հայտնում են ՀՀ կառավարությունից:

Կողմերը կարեւորել են 2025 թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում կայացած հանդիպման արդյունքները, այդ թվում՝ խաղաղության վերաբերյալ համատեղ հռչակագիրը եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի նախաստորագրումը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ երկու երկրների միջեւ տնտեսական կապերի ակտիվացմանը: Կառավարության փոխանցմամբ՝ որպես խաղաղության ամրապնդման գործնական դրսեւորումներ են դիտարկվել ադրբեջանական նավթամթերքի արտահանումը Հայաստան, հացահատիկի եւ երրորդ երկրներից ծագող այլ ապրանքների՝ Ադրբեջանի տարածքով Հայաստան տարանցումը, ինչպես նաեւ երկկողմ առեւտրային հարաբերությունների հաստատումը:

Փաշինյանն ու Ալիեւը քննարկել են նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման գործընթացը՝ ընդգծելով համապատասխան հանձնաժողովների աշխատանքը շարունակելու անհրաժեշտությունը:

Առանձին անդրադարձ է եղել Վաշինգտոնի պայմանավորվածություններից բխող «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման»՝ TRIPP-ի իրականացման հետագա քայլերին: Կողմերը կարեւորել են նաեւ տարածաշրջանային կապակցվածության նախագծերի իրականացումը:

Կառավարության հաղորդագրության համաձայն՝ Փաշինյանն ու Ալիեւը դրական են գնահատել խորհրդարանականների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ ձեւավորված շփումները՝ դրանք դիտարկելով փոխադարձ վստահության ամրապնդման տեսանկյունից:

Հանդիպման ավարտին Հայաստանի վարչապետն ու Ադրբեջանի նախագահը պայմանավորվել են շարունակել երկկողմ անմիջական շփումները՝ տեւական խաղաղության ամրապնդման, միջպետական հարաբերությունների կարգավորման եւ տարածաշրջանային կապակցվածության խորացման ուղղությամբ:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՍԾ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել Միասնական սոցիալական ծառայության պաշտոնատար անձանց կենսագրություններն ու հայտարարագրերը: Այս անգամ ներկայացնում ենք ՄՍԾ պետի տեղակալ Լիանա Թովմասյանի կենսագրությունն ու ունեցվածքը:

Ո՞վ է Լիանա Թովմասյանը

Լիանա Թովմասյանը ՄՍԾ պետի տեղակալի պաշտոնը զբաղեցնում է 2025 թվականի դեկտեմբերի 10-ից: Մինչ այդ նա աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում, այդ թվում՝ որպես նախարարի խորհրդական, իսկ 2019-2022 թվականներին աշխատել է ՊԵԿ իրավաբանական վարչությունում: 2025 թվականին եղել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ավագ իրավաբան-փորձագետ:

Թովմասյանը իրավագիտության մագիստրոսի եւ բակալավրի աստիճանները ստացել է Հայաստանում ֆրանսիական համալսարանում: Բակալավրիատն ավարտել է գերազանցությամբ: 2024 թվականին մասնակցել է նաեւ Լեյդենի համալսարանի եւ Հաագայի տեղական կառավարման ակադեմիայի MATRA Rule of Law ծրագրին:

2024 թվականից նա դասավանդում է Արդարադատության նախարարության «Իրավական կրթության եւ վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»-ում, ինչպես նաեւ Համաշխարհային բանկի Թվային արդարադատության աշխատանքային խմբի անդամ է:

Ի՞նչ ունի

2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Թովմասյանի անունով առկա է մեկ բնակարան Երեւանում՝ Արաբկիր վարչական շրջանում: Բնակարանը նրա միանձնյա սեփականությունն է, այն ձեռք է բերել 2023 թվականի օգոստոսի 15-ին՝ նվիրատվությամբ:

Տարվա ընթացքում նա նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ գույք չի օտարել: Տրանսպորտային միջոց, արժեթղթեր, ներդրումներ, բանկային ավանդներ նույնպես չի հայտարարագրել:

Տարեվերջին նրա երեք բանկային հաշիվներում առկա է եղել ընդհանուր 5 մլն 265 հազար 734 դրամ: Բացի այդ, նա հայտարարագրել է 3 մլն 500 հազար դրամ կանխիկ գումար: Տարվա սկզբում կանխիկ գումարը կազմել էր 2 մլն դրամ:

Թովմասյանի 2025 թվականի ընդհանուր հայտարարագրված եկամուտը կազմել է 12 մլն 614 հազար 454 դրամ: Այդ գումարը ձեւավորվել է տարբեր պետական կառույցներից եւ կազմակերպություններից ստացած աշխատավարձերից ու դրան հավասարեցված վճարումներից:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ՔՊ–ՈՒՄ ԹԵԺ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ իշխանության ներսում այս օրերին ակտիվորեն զբաղված են առաջիկա ՏԻՄ ընտրությունների նախապատրաստական աշխատանքներով:

Հայաստանում աշնանը սպասվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների բավական ակտիվ փուլ: ԿԸՀ-ի սահմանած ժամանակացույցով՝ ընտրությունները կանցկացվեն սեպտեմբերի 27-ին, հոկտեմբերի 25-ին եւ նոյեմբերի 29-ին: Առաջին փուլում ընտրություններ են նախատեսված չորս համայնքում, այդ թվում՝ Լոռու մարզի Թումանյան համայնքում:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ իշխանական թիմում այս ընտրություններին վերաբերվում են ոչ թե որպես հերթական տեղական ընտրության, այլ որպես ՔՊ-ի քաղաքական ազդեցությունը համայնքներում ամրապնդելու կարեւոր փուլ:

ArmLur.am-ի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ այս օրերին ՔՊ-ում քննարկվում է, թե տարբեր համայնքներում ովքեր են լինելու իշխանության թեկնածուները, ինչպիսի կազմով են ձեւավորվելու ընտրական ցուցակները եւ հատկապես՝ որ թեկնածուներն են ունակ ապահովվելու անհրաժեշտ արդյունք:

Ըստ մեր տեղեկությունների՝ թեկնածուների ընտրության հարցում առանցքային դերակատարություն են ունենալու մարզային իշխանության ներկայացուցիչները: Մարզպետների միջոցով իշխանությունը փորձում է հասկանալ՝ համայնքներում ովքեր են առավել ազդեցիկ, ինչ ռեսուրսներ ունեն եւ ովքեր կարող են ՔՊ-ի համար ապահովել հաղթանակ:

Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ հարցը քննարկվում է նաեւ ՔՊ-ի վարչության մակարդակում, որտեղ պետք է հստակեցվեն ընտրություններին մասնակցելու քաղաքական որոշումները, թեկնածուների եւ ցուցակների հարցերը:

Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինյանը բավական խիստ պահանջ է դրել՝ ՏԻՄ ընտրություններում հնարավորինս բարձր արդյունք ապահովելու վերաբերյալ: Այսինքն՝ իշխանությունը մտադիր չէ համայնքներում ընտրական գործընթացը թողնել ինքնահոսի եւ պատրաստվում է ակտիվորեն աշխատել ՔՊ-ի թեկնածուների հաղթանակի համար:

Հատկապես ուշադրության կենտրոնում են այն համայնքները, որտեղ ՔՊ-ն նախկինում ունեցել է խնդիրներ կամ որտեղ մրցակցությունը կարող է ավելի կոշտ լինել:

Առաջին լուրջ փորձությունը իշխանության համար լինելու է Թումանյան համայնքը, որտեղ սեպտեմբերի 27-ին անցկացվելու են համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրություններ:

Սակայն Թումանյանը, ըստ էության, լինելու է միայն առաջին փուլը: Աշնանը ընտրություններ են սպասվում տասնյակ համայնքներում, եւ իշխանության համար սա լինելու է 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո առաջին խոշոր քաղաքական ստուգատեսներից մեկը տեղական մակարդակում:

2026 թվականի աշնանը ՏԻՄ ընտրություններ են նախատեսված 46 համայնքում: Այդ թվում՝ համամասնական ընտրակարգով ընտրություններ են նախատեսված Թումանյանում, Վանաձորում, Գյումրիում, Կապանում, Իջեւանում եւ այլ համայնքներում:

Այսպիսով, իշխանության համար առաջիկա ամիսները կարող են վերածվել համայնքային իշխանությունը ՔՊ-ի վերահսկողության տակ պահելու կամ ընդլայնելու պայքարի:

Իսկ իշխանական թիմում, մեր տեղեկություններով, արդեն սկսել են հաշվարկել ոչ միայն այն, թե ով պետք է առաջադրվի, այլեւ՝ ով է իրականում կարողանալու հաղթել:

Թե ինչ թեկնածուների շուրջ է վերջնականապես կանգնելու ՔՊ-ն, եւ ինչ մեխանիզմներով է իշխանությունը պատրաստվում ապահովել ցանկալի արդյունքը, առաջիկայում ավելի հստակ կդառնա:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՓԱԹԵԹ

Եվրամիությունը նախատեսում է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների նոր փաթեթում ներառել շուրջ 1600 ֆիզիկական եւ իրավաբանական անձի: Այս մասին, հղում անելով աղբյուրներին, հայտնել է եվրոպական Politico պարբերականը:

Պարբերականի տվյալներով՝ նոր սահմանափակումների փաթեթը կարող է դառնալ Ռուսաստանի դեմ սահմանված ամենախոշորներից մեկը՝ Ուկրաինայի պատերազմի մեկնարկից ի վեր: Նոր պատժամիջոցների անհրաժեշտությունը, ըստ Politico-ի, ԵՄ-ում կապում են Ռուսաստանի կողմից ենթադրյալ հիբրիդային գործողությունների ակտիվացման հետ:

Սպասվում է, որ պատժամիջոցների նոր փաթեթը կներկայացվի հոկտեմբերին՝ ԵՄ առաջնորդների հանդիպման ընթացքում:

Նշվում է, որ նոր միջոցների շուրջ քննարկումները ակտիվացել են նաեւ Գերմանիայում Լայպցիգի օդանավակայանում տեղի ունեցած միջադեպից հետո: Գերմանական իշխանությունները դեպքը դիտարկում են որպես հնարավոր հիբրիդային հարձակում՝ չբացառելով օտարերկրյա պետությունների ներգրավվածությունը:

ՄԻՋՈՑՆԵՐ ԿՁԵՌՆԱՐԿԻ

Ռուսաստանը կձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Պետդումայի ընտրությունների ընթացքում Եվրոպայի կողմից հնարավոր սադրանքներին հակազդելու համար: Այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

Պեսկովի խոսքով՝ տարբեր սադրիչ գործողություններ եղել են, կան եւ կլինեն, իսկ Ռուսաստանը դրանց հակազդելու փորձ ունի:

«Այս առումով մեզ փորձը չի պակասում: Հետեւաբար, կարծում եմ՝ բոլոր նրանք, ովքեր պետք է, անհրաժեշտ միջոցները կձեռնարկեն»,- ասել է Պեսկովը:

Ավելի վաղ ՌԴ արտաքին հետախուզության ծառայության մամուլի բյուրոն հայտնել էր, որ Եվրոպան նպատակ է դրել խոչընդոտել Ռուսաստանում ընտրական գործընթացի բնականոն ընթացքին եւ վարկաբեկել ընտրությունների արդյունքները:

Ռուսաստանում Պետդումայի 9-րդ գումարման պատգամավորների ընտրությունները նախատեսված են սեպտեմբերին: Քվեարկությունը կանցկացվի երեք օր՝ սեպտեմբերի 18-ից 20-ը:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն առաջիկա Պետդումայի ընտրություններն անվանել է երկրի ներքաղաքական կյանքի կարեւորագույն իրադարձություն:

ՎՃՌԱԿԱՆՈՐԵՆ ԿԱՐՁԱԳԱՆՔԻ

Իրանը պատերազմ չի ցանկանում, սակայն վճռականորեն կարձագանքի ցանկացած հարձակման, հայտարարել է Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը Թեհրանից դեպի Բիշքեկ մեկնելուց առաջ՝ մասնակցելու Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) առաջնորդների գագաթնաժողովին:

«Մենք չենք ձգտում պատերազմի, եւ սա հստակ ազդանշան է, որը մենք փոխանցել ենք աշխարհին: Այնուամենայնիվ, մենք երբեք լուռ չենք հետեւելու որեւէ ագրեսիայի եւ վճռական պատասխան ենք տալու»,- նշել է Փեզեշքիանը:

Նա ընդգծել է, որ անկայունությունն ու անկարգությունները տարածաշրջանում օգուտ չեն բերի ոչ մի երկրի եւ խնդիրներ կստեղծեն բոլորի համար:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ԳԱՆԳԱՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ՄԻԵԴ

2026 թ. օգոստոսի 21-ին իրավապաշտպան, ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացրել խմբային գանգատ՝ Ադրբեջանում անազատության մեջ պահվող հայ գերիների իրավունքների խախտումների վերաբերյալ: Այս մասին հայտնում են Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնից:

Գանգատը ներկայացվել է Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Բակո Սահակյանի, Արկադի Ղուկասյանի, Արայիկ Հարությունյանի, Ազգային ժողովի նախկին նախագահ Դավիթ Իշխանյանի, Արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանի, գեներալ-մայոր եւ նախկին ավագ զինվորական հրամանատար Դավիթ Մանուկյանի, գեներալ-լեյտենանտ, Պաշտպանության բանակի նախկին նախարար Լեւոն Մնացականյանի, ինչպես նաեւ Մադաթ Բաբայանի, Գարիկ Մարտիրոսյանի, Լեւոն Բալայանի, Դավիթ Ալլահվերդյանի, Վասիլի Բեգլարյանի, Էրիկ Ղազարյանի, Գուրգեն Ստեփանյանի եւ Մելիքսեթ Փաշայանի վերաբերյալ:

Գանգատում բարձրաձայնվում է Ադրբեջանի կողմից 15 հայերի նկատմամբ իրականացված «դատավարությունների» անհամապատասխանությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Բաքվի ռազմական դատարանում իրականացված «դատավարությունները» կրել են շինծու եւ կանխորոշված բնույթ՝ զուրկ լինելով անկախ եւ անաչառ քննության հիմնարար երաշխիքից: Միաժամանակ, ռազմական դատարանը չի ունեցել քաղաքացիական անձանց վերաբերյալ գործեր քննելու եւ դատական ակտեր կայացնելու համապատասխան իրավասություն:

Միաժամանակ, դատավարությունից առաջ եւ դրա ընթացքում Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները, այդ թվում՝ նախագահ Իլհամ Ալիեւը, ամբաստանյալներին հրապարակայնորեն ներկայացրել են որպես «ահաբեկիչներ», «ռազմական հանցագործներ» եւ «անջատողականներ»՝ նախքան նրանց մեղավորության վերաբերյալ դատական ակտի կայացումը: Նույն մոտեցումն արտացոլվել է նաեւ Ադրբեջանի պետական եւ իշխանամետ լրատվամիջոցների հրապարակումներում, որտեղ առաջադրված մեղադրանքները ներկայացվել են որպես հաստատված փաստեր: Այսպիսով, մեղավորության վերաբերյալ հանրային եւ պաշտոնական դիրքորոշումը ձեւավորվել է դատական գործընթացի ավարտից առաջ՝ խաթարելով անմեղության կանխավարկածը:

Գանգատում բարձրացվում են նաեւ պաշտպանության իրավունքի խախտման հարցեր: Մասնավորապես, 422 հատորից եւ շուրջ 105 հազար էջից բաղկացած գործի նյութերի մեծ մասը հասանելի չի եղել պատշաճ թարգմանությամբ: Պաշտպանական կողմի՝ գործի նյութերին ծանոթանալու, թարգմանություններ ստանալու, բավարար ժամանակ եւ հնարավորություններ ունենալու եւ պաշտպանյալների հետ արդյունավետ հաղորդակցվելու պահանջները մերժվել կամ անհարկի ձգձգվել են:

Պաշտպանության իրավունքի խախտումները շարունակվել են նաեւ «դատավճռի» տրամադրման եւ դրա բողոքարկման փուլում: Գերիներին հնարավորություն է տրվել միայն ընթերցելու «դատավճիռը», որի վրա առկա չեն եղել պաշտոնական կնիք կամ դրա իսկությունը հավաստող այլ վավերապայմաններ: Այս պայմաններում հնարավոր չի եղել ստուգել՝ արդյոք ընթերցման համար ներկայացված տեքստը «դատավճռի» ամբողջական եւ վերջնական տարբերակն է, ինչպես նաեւ երաշխավորված չի եղել դրա անփոփոխելիությունը: Միաժամանակ, «դատավճռի» օրինակները չեն տրամադրվել ո՛չ գերիների ընտանիքներին, ո՛չ անվճար իրավաբանական օգնության շրջանակում Ադրբեջանի կողմից նշանակված փաստաբաններին. վերջիններիս հասանելի են դարձվել միայն առանձին քաղվածքներ: Չնայած պաշտպանության իրավունքի այս ակնառու սահմանափակումներին՝ 2026թ. օգոստոսի 6-ին վերաքննիչ դատարանը «դատավճիռն» ու դրանով նշանակված պատիժները թողել է անփոփոխ՝ միջազգային հանրության առջեւ բացահայտելով Ադրբեջանի ներպետական իրավական մեխանիզմների համակարգային անարդյունավետությունը՝ էթնիկ հայերի իրավունքների պաշտպանության ապահովման հարցում:

Գանգատում բարձրացվում է նաեւ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով երաշխավորված՝ առանց օրենքի հանցագործություն եւ պատիժ չլինելու սկզբունքի խախտման հարցը: Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների եւ մյուս գերիների մասնակցությունը ռազմական գործողություններին կամ զենք կրելը ինքնին չեն կարող նույնացվել ահաբեկչական կամ այլ հանցավոր գործունեության հետ եւ հիմք ծառայել քրեական պատասխանատվության համար՝ առանց յուրաքանչյուր անձի վերագրվող կոնկրետ հանցավոր արարքի եւ անհատական մեղքի հաստատման:

ՄԻԵԴ-ի հնարավոր վճիռը կարող է ունենալ ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական հետեւանքներ: Այն միջազգային դատական մակարդակով կասկածի տակ է դնելու իրականացված դատավարության եւ դրա արդյունքում կայացված «դատավճռի» օրինականությունն ու իրավական արժեքը՝ առաջ բերելով իրավունքի խախտումների հետեւանքների վերացման անմիջական պարտականություն:

Քաղաքական նպատակներով հետապնդումների միջազգային դատական արձանագրումը էապես չեզոքացնում է Ադրբեջանի փորձը՝ ներպետական շինծու դատական գործընթացների միջոցով իրավական հավաստիություն հաղորդելու հակամարտության վերաբերյալ սեփական պաշտոնական պատմությանը: Այդ պարագայում «դատավճիռը» կկորցնի իր նշանակությունը՝ որպես հակամարտության վերաբերյալ Ադրբեջանի միակողմանի պատմական եւ քաղաքական մեկնաբանությունը արտացոլող փաստաթուղթ՝ սահմանափակելով այդ «դատավճռի» օգտագործումը միջազգային քաղաքական եւ դիվանագիտական հարթակներում:

Գանգատը ներկայացվել է հասարակական գործունեության շրջանակում՝ «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի» եւ «Արդարադատության եւ մարդու իրավունքների հայկական իրավական կենտրոնի» հետ համագործակցությամբ:

ԿՅԱՆՔԸ ՉԻ ՀԱՋՈՂՎԵԼ ՓՐԿԵԼ

Օգոստոսի 28-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 09:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի բաժնում տեղեկություն է ստացվել, որ ժամը 08:40-ի սահմաններում շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը «Աբովյան» բժշկական կենտրոն է տեղափոխել անչափահասի, ով հիվանդանոցում մահացել է: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Կոտայքի բաժնի օպերատիվ խումբը՝ օրվա պատասխանատուի գլխավորությամբ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ տեղում պարզվել է, որ մահացածը Կոտայքի մարզի բնակիչ, 16-ամյա Կ. Ղ.-ն է: Արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Դեպքի փաստով ոստիկանության Կոտայքի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին:

ԿԱԼԱՆՔ

ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է 3 ԱՄՍՈՎ



Դատավորը որոշում է կայացրել Արմեն Աշոտյանի խափանման միջոց տնային կալանքը երկարաձգել երեք ամսով:

Նշենք, որ դատախազ Մանե Սաֆարյանը միջնորդել է Աշոտյանի տնային կալանքը երկարաձգել եւս 3 ամսով

Ըստ նրա՝ ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը, որի նկատմամբ կիրառվել է տնային կալանք ու բացակայելու արգելք, այլընտրանքային խափանման միջոցի կիրառման դեպքում կարող է ապօրինի կերպով խոչընդոտել ապացուցման գործընթացին:

Հիշեցնենք, որ Քննչական կոմիտեից հայտնել էին, որ 2009-2016-ն ընկած ժամանակահատվածում կրթության եւ գիտության նախարարի պաշտոնը զբաղեցրած Արմեն Աշոտյանը, լիազորված լինելով խթանել կրթության եւ գիտության զարգացմանը, մշակել եւ իրականացնել կրթության եւ գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, 2008-ի օգոստոսի 20-ից մինչեւ 2014-ի ապրիլի 26-ը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի, ապա մինչեւ 2016-ի սեպտեմբերի 20-ը ֆինանսների նախարարի պաշտոնները զբաղեցրած Գագիկ Խաչատրյանի եւ վերջինիս որդու՝ Ա.Խ.-ի նյութական օգուտը՝ նրանց կողմից շահեկան պայմաններով, առանց խոչընդոտների, օտարման ոչ ենթակա գույք ձեռք բերելն ապահովելու անձնական շահագրգռվածությունից եւ խմբային շահերից ելնելով, խմբի կազմում՝ ՀՀ «Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ Վ.Ս.-ի, նույն ՊՈԱԿ-ի ռեկտոր Գ.Գ.-ի, պրոռեկտոր Ա.Ա.-ի, Ա.Խ.-ի, Գ.Խ.-ի, ինչպես նաեւ վերջիններիս հետ փոխկապակցված Հ.Թ.-ի հանցակցությամբ պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչի հետեւանքով Հայաստանի Հանրապետության սեփականության ֆոնդից կոռուպցիոն սխեմայի կիրառմամբ դուրս է բերվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Պուշկին փողոցի 38/1 շենքի թիվ 59 հասցեում գտնվող 208 մլն 908 հզր 500 դրամ արժեքով առանձնապես խոշոր չափերով 451.1 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը եւ դրա անբաժանելի մաս համարվող հողամասը եւ ոչ ուսումնական նպատակներով օգտագործելու համար փոխանցվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի եւ վերջինիս հետ փոխկապակցված անձի սեփականության ֆոնդ:

● *Օգոստոսի 17-ից 24-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 5095 խախտում:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱԶԱՏԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Օգոստոսի 25-ին գրող, լրագրող, խմբագիր, 53 տարի Իջեւանի քոլեջում դասախոս աշխատող Ջավեն Ալավերդյանը «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի տնօրեն Նարինե Իշխանյանի հրամանով ազատվել է աշխատանքից այն բանի համար, որ հունիսի 9-ին եւ 23-ին անհարգելի կերպով բացակայել է աշխատանքից: Ջ.Ալավերդյանն ասաց, որ այդ օրերին քոլեջում դասեր չեն եղել, ինքն էլ, գտնվելով անառողջ վիճակում, Իջեւանի առողջության առաջնային պահպանման կենտրոնից ներկայացրել է իր անաշխատունակության վերաբերյալ տեղեկանքներ: Նա իրեն աշխատանքից ազատելն ապօրինի է համարում: Նա հայտնեց, որ քոլեջի տնօրինությունն աշխատանքից ազատել է քոլեջի հավաքարար Էմմա Օրդինյանին, գրադանավար Սաշա Հովսեփյանին, պահակ Գագիկ Մարկոսյանին: Վերջինս իրեն աշխատանքից ազատելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջով հայց է ներկայացրել դատարան: Ջ. Ալավերդյան ասաց, որ «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջը» գյուղատնտեսական ուղղվածություն ունի, սակայն տնօրեն Նարինե Իշխանյանը, ոչ էլ նրա տեղակալներ Մարգարիտ Պողոսյանը եւ Լաուրա Գեւորգյանը գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ չեն, համապատասխան կրթություն չունեն: Մասնավորապես, Մ. Պողոսյանը նորարարությունների եւ զարգացման գծով մասնագետ է, իսկ Լ. Գեւորգյանը՝ ֆրանսերեն լեզվի: Իջեւանի քոլեջի տնօրինության հետ հակամարտությունը սկսվել է այն բանից, երբ Ջ. Ալավերդյանը Ֆեյսբուքում հանրայնացրել է ուսումնական պարապմունքների ժամանակ քոլեջի դռները փակելու մասին, որի հետեւանքով շուրջ 350 ուսանողների եւ 80 աշխատակիցների կյանքի եւ առողջության համար ստեղծվում են վտանգավոր իրավիճակներ՝ հնարավոր երկրաշարժերի, հրդեհների եւ այլնի դեպքում: Դրանից հետո նա համացանցում բաց նամակով դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որով հայտնել է իր ստացած նկատողության մասին: Ջ. Ալավերդյանը «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի դեմ հայց է ներկայացրել, որով դատարանից խնդրել է իր նկատմամբ կարգապահական տույժն անվավեր ճանաչել: Դրանից հետո քոլեջի տնօրենի պաշտոնակատար Մարգարիտ Պողոսյանը 2-րդ նկատողությունն է տվել Ջ. Ալավերդյանին, որն անվավեր ճանաչելու պահանջով եւս Ջ. Ալավերդյանը դիմել է դատարան: Նարինե Իշխանյանը հոգաբարձուների խորհրդի քվեարկությամբ նշանակվել է «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի տնօրեն: Հուլիսի 28-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նարինե Անանյանը վճռել է Ջ. Ալավերդյանի հայցը բավարարել, անվավեր ճանաչել Մարգարիտ Պողոսյանի հրամանը, «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամից պետական բյուջե բռնագանձել 20 հազար ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: Ջ. Ալավերդյանի մյուս հայցը՝ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ 2026թ. հունիսի 2-ի N62-26 հրամանն անվավեր ճանաչելու մասին, քննում է նույն դատավորը՝ Նարինե Անանյանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ԵՆ ԱՆԵԼՈՒ

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունը լրջորեն նախապատրաստվում է հոկտեմբերի 25-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին եւ նպատակ ունի «Քաղաքացիական պայմանագրի» թեկնածուներ առաջադրել բոլոր այն համայնքներում, որտեղ ընտրություններ են նախատեսված:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաստատած ժամանակացույցի համաձայն՝ հոկտեմբերի 25-ին համամասնական ընտրակարգով ընտրություններ են անցկացվելու 19 համայնքում:

Դրանք են՝

Արարատի մարզի Արտաշատը,

Արմավիրի մարզի Արմավիրն ու Արաքսը,

Գեղարքունիքի մարզի Գավառը,

Մարտունին եւ Վարդենիսը,

Կոտայքի մարզի Հրազդանը, Ծաղկաձորը եւ Գառնին,

Շիրակի մարզի Ախուրյանն ու Արթիկը,

Սյունիքի մարզի Գորիսն ու Մեղրին,

Վայոց ձորի մարզի Եղեգնաձորը, Վայքը եւ Ջերմուկը,

Տավուշի մարզի Իջեւանն ու Դիլիջանը, ինչպես նաեւ Լոռու մարզի Ստեփանավանը:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիրն» այս ընտրություններին պատրաստվում է բավական լուրջ: Իշխանության ներսում քննարկվում է բոլոր համայնքներում սեփական թեկնածուներով հանդես գալու եւ հատկապես խոշոր ու քաղաքական առումով կարեւոր համայնքներում առավել ուժեղ թիմեր ձեւավորելու հարցը:

Ըստ իշխանական շրջանակներին մոտ մեր աղբյուրների՝ ՔՊ-ի համար խնդիրը միայն ընտրություններին մասնակցելը չէ: Իշխանությունը ցանկանում է հնարավորինս պահպանել իր դիրքերը այն քաղաքներում եւ համայնքներում, որտեղ արդեն ունի ազդեցություն, եւ կանխել ընդդիմադիր կամ այլ քաղաքական ուժերի ամրապնդումը տեղական իշխանություններում:

Հատկապես ուշադրության կենտրոնում են լինելու Արտաշատը, Արմավիրը, Հրազդանը, Գավառը, Վարդենիսը, Մարտունին, Գորիսը, Իջեւանը եւ Դիլիջանը: Այս համայնքներում ընտրությունների արդյունքները կարող են ավելի մեծ քաղաքական նշանակություն ստանալ, քանի որ խոսքը ոչ միայն տեղական կառավարման, այլեւ մարզերում իշխանության քաղաքական ազդեցության պահպանման մասին է:

ՔՊ-ում, ըստ մեր տեղեկությունների, այժմ քննարկվում են նաեւ թեկնածուների հարցերը: Կուսակցության ներսում փորձում են հասկանալ, թե որ համայնքում ով կարող է առավել արդյունավետ ներկայացնել իշխանական թիմը եւ ապահովել անհրաժեշտ ձայներ:

Այս համատեքստում ուշագրավ է, որ դեռեւս օգոստոսին ՔՊ վարչության նիստի օրակարգում տեղական ընտրություններին վերաբերող հարցեր են եղել: ArmLur.am-ը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ նախատեսված էր ՔՊ վարչության նիստ, ինչը ցույց է տալիս, որ առաջիկա ՏԻՄ ընտրությունները իշխանության քաղաքական օրակարգում արդեն իսկ ակտիվորեն քննարկվում են:

Հոկտեմբերի 25-ի ընտրությունները ՔՊ-ի համար նաեւ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո առաջին լուրջ տեղական քաղաքական փորձություններից են: Այստեղ իշխանությունը ստիպված է լինելու ոչ միայն պահպանել իր ունեցած դիրքերը, այլեւ ցույց տալ, թե որքանով է կարողանում իր համապետական ընտրական արդյունքները վերածել տեղական քաղաքական ազդեցության:

Իսկ առաջիկա շաբաթներին իշխանության հիմնական խնդիրներից մեկը լինելու է հենց թեկնածուների վերջնական ընտրությունը: Մեր տեղեկություններով՝ այս հարցում ՔՊ-ն պատրաստվում է հատկապես մեծ քաղաքների համար ընտրություն կատարել առավել զգուշորեն, քանի որ այդ համայնքներում պարտությունը կարող է ունենալ ոչ միայն տեղական, այլեւ քաղաքական ու հանրային արձագանք:

Այսպիսով, հոկտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրությունները աստիճանաբար վերածվում են իշխանության համար հերթական քաղաքական թեստի: ՔՊ-ն, ըստ մեր տեղեկությունների, նպատակ ունի հնարավորինս լայն մասնակցություն ապահովել եւ պայքարել բոլոր հիմնական համայնքներում՝ պահպանելու համար մարզերում եւ խոշոր քաղաքներում իր քաղաքական դիրքերը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԿՀԱՏԿԱՑՆԻ 7-9 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ

Լիդիան Արմենիան տեղեկացնում է ՀՀ կառավարության՝ ի դեմս Էկոնոմիկայի նախարարության, եւ Ամուլսարի շրջակա խոշորացված Ջերմուկ, Վայք եւ Սիսիան համայնքների հետ Համայնքային զարգացման համաձայնագրի կնքման մասին:

Ըստ ս.թ. օգոստոսի 31-ին կնքված Համայնքային զարգացման համաձայնագրի՝ Լիդիան Արմենիան պարտավորվել է Ամուլսարի հանքավայրի շինարարության եւ արտադրության յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի համար համայնքների զարգացման նպատակով տրամադրել 7 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, եթե արտադրության փուլում ոսկու մեկ ունցիայի միջին գինը գերազանցի 3,550 ԱՄՆ դոլարը, ընկերության տարեկան հատկացումը կկազմի 9 մլն ԱՄՆ դոլար:

Ընկերության տարեկան համայնքային զարգացման ներդրումը բաշխվելու է երկզամբյուղ մոդելով:

Տարեկան ներդրման 70%-ը բաշխվելու է Ջերմուկ, Վայք եւ Սիսիան խոշորացված համայնքների միջեւ՝ Համաձայնագրով սահմանված բանաձեւի համաձայն: Բանաձեւը հիմնվում է մի շարք գործոնների վրա, այդ թվում՝ ազդակիր Ջերմուկ, Կեչուտ, Գնդեվազ, Սարավան եւ Գորայք բնակավայրերի բնակչության թվի, Ամուլսարի ծրագրի կողմից օգտագործվող հողատարածքների մակերեսի եւ հանքի ենթակառուցվածքներին բնակավայրերի մոտ գտնվելու: Միաժամանակ Համաձայնագրով ամրագրված է կարեւոր սկզբունք՝ յուրաքանչյուր ազդակիր բնակավայր պարտադիր ստանալու է համապատասխան խոշորացված համայնքի համար նախատեսված գումարի առնվազն 20%-ը:

Տարեկան ներդրման մնացած 30%-ը մրցակցային հիմունքներով ուղղվելու է համայնքային զարգացման ծրագրերի ֆինանսավորմանը: Այս մեխանիզմը հնարավորություն կտա աջակցել այն նախաձեռնություններին, որոնք ունեն համայնքային կայուն զարգացման առավել մեծ ազդեցություն եւ կարող են երկարաժամկետ ու չափելի արդյունք ապահովել ավելի մեծ թվով բնակիչների համար:

Հարկ ենք համարում ընդգծել, որ նշված գումարները Լիդիան Արմենիայի կողմից ուղղակիորեն չեն փոխանցվելու համայնքային բյուջեներ: Դրանք տրամադրվելու են ընկերության կողմից հիմնադրված Ամուլսարի համայնքային զարգացման հիմնադրամին:

Համայնքները՝ ֆինանսավորման ենթակա ծրագրերը ներկայացնելու են Հիմնադրամին: Ծրագրերի հաստատման դեպքում Հիմնադրամը տրամադրելու է համապատասխան ֆինանսավորումը: Ծրագրերի հաստատման իրավասությունը վերապահվելու է Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմնին՝ Հիմնադրամի խորհրդին: Այն կազմված է լինելու Լիդիան Արմենիայի չորս եւ Ջերմուկ, Վայք ու Սիսիան համայնքների մեկական ներկայացուցիչներից:

Համաձայնագրով սահմանվել են նաեւ ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության, հաշվետվողականության եւ աուդիտի հստակ ընթացակարգեր, որոնք կոչված են ապահովելու համայնքային զարգացման համար նախատեսված միջոցների թափանցիկ, նպատակային եւ արդյունավետ կառավարումը:

Այսպիսով, Համայնքային զարգացման համաձայնագրի կնքմամբ ձեւավորվում է Ամուլսարի շրջակա համայնքներին Լիդիան Արմենիայի երկարաժամկետ աջակցության կանխատեսելի, թափանցիկ եւ ինստիտուցիոնալ համակարգ: Ընկերությունը՝ որպես համայնքների վստահելի գործընկեր, շարունակելու է իր գործունեությունն այն սկզբունքով, որ Ամուլսարի ծրագրի տնտեսական արդյունքները պետք է վերածվեն նաեւ շրջակա համայնքների համար տեսանելի եւ երկարաժամկետ զարգացման հնարավորությունների: Համայնքային զարգացման համաձայնագիրը հենց այդ մոտեցման գործնական արտահայտությունն է՝ ուղղված համայնքների կայուն զարգացմանն ու բնակիչների բարեկեցության բարձրացմանը:

● *Մարզերում օգոստոսի 17-ից 24-ը պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 17657 խախտում:*

ԱՇԽԱՐՀ

ԼԱՍՏԱՆԱՎ Է ՇՐՋՎԵԼ

Հյուսիսային Կիպրոսի ափերի մոտ կիրակի՝ օգոստոսի 30-ին, շուրջ 270 ուղեւոր եւ անձնակազմի անդամ տեղափոխող լաստանավ է շրջվել: Դեպքի հետեւանքով առնվազն 8 մարդ զոհվել է, եւս 18-ը համարվում են անհետ կորած: Փրկարարները կարողացել են փրկել 241 մարդու:

Մասնավոր լաստանավը Կիրենիա նավահանգստից դուրս է եկել տեղական ժամանակով ժամը 12:30-ին եւ անմիջապես սկսել է սուզվել: Դեպքի պատճառը դեռեւս հայտնի չէ: Լաստանավը ուղեւորվում էր դեպի Թուրքիայի արեւելյան Միջերկրական ծովի ափին գտնվող Թաշուջու նավահանգիստ:

Լաստանավում ընդհանուր առմամբ եղել է 267 մարդ՝259 ուղեւոր եւ անձնակազմի 8 անդամ: Դեպքը տեղի է ունեցել Կիրենիայի ափերի անմիջական հարեւանությամբ: Տարածքը հայտնի է որպես զբոսաշրջային կենտրոն, իսկ նման լաստանավերը ամեն օր կապ են ապահովում Հյուսիսային Կիպրոսի եւ Թուրքիայի միջեւ:

Դեպքից հետո լաստանավի շրջված կորպուսի վրա մարդիկ են մնացել՝ փրկարարական բաճկոններով: Նրանց ափ հասցնելու համար գործողությանը ներգրավվել են առափնյա պահպանության եւ քաղաքացիական նավեր, ինչպես նաեւ ուղղաթիռներ:

Հյուսիսային Կիպրոսի իշխանությունները հայտնել են, որ լաստանավի նավապետը եւ անձնակազմի 7 անդամները ձերբակալվել են՝ հարցաքննության նպատակով: Ավելի ուշ նավը ամբողջությամբ խորտակվել է եւ նստել ծովի հատակին՝ 514 մետր խորության վրա: Որոնողափրկարարական աշխատանքներին պետք է միանան նաեւ Թուրքիայի ջրասուզակները:

Հյուսիսային Կիպրոսի թուրքական հատվածի ղեկավար Թուֆան Էրհյուրմանը հայտարարել է, որ որոնողափրկարարական աշխատանքները շարունակվելու են այնքան ժամանակ, մինչեւ բոլոր անհետ կորածներին գտնեն:

Նա նաեւ նշել է, որ նախորդ օրը՝ շաբաթ օրը, Կիպրոսում ուժեղ փոթորիկներ էին, որոնց հետեւանքով կղզու հարավ-արեւելքում մեկ մարդ զոհվել էր: Սակայն, նրա խոսքով, կիրակի օրը եղանակային պայմանները համարվել են նավարկության համար բարենպաստ:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ցավակցություն է հայտնել զոհվածների ընտանիքներին եւ նշել, որ անհետ կորածներին որոնելու աշխատանքները շարունակվում են: Օգնություն եւ ցավակցություն է հայտնել նաեւ Կիպրոսի միջազգայնորեն ճանաչված կառավարությունը:

ՄՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

IDBANK

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՊԱՐԶԱՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ՉԷ

Աշխատավարձի մասին խոսելիս սովորաբար առաջին հերթին կարեւորում ենք դրա չափը: Սակայն կողակերացնե՞ք, որ նույն եկամուտն ունեցող երկու մարդկանց ֆինանսական իրավիճակները կարող են էականորեն տարբեր լինել:

Օրինակ, մեկի աշխատավարձը կարող է ամբողջությամբ ծախսվել մինչեւ ամսվա ավարտը, իսկ մյուսինը՝ բավարարել նաեւ խնայողություններ ձեւավորելու եւ երկարաժամկետ նպատակներին մոտենալու համար: Տարբերությունը ոչ միայն ծախսերի չափի, այլեւ աշխատավարձի կառավարման ձեւի մեջ է:

Աշխատավարձը միայն ընթացիկ ծախսերի համար չէ

Աշխատավարձը միաժամանակ պետք է ապահովի առօրյա կարիքները, օգնի կատարել պարտադիր վճարումները, ստեղծել ֆինանսական պահուստ եւ իրականացնել ապագայի ծրագրերը:

Եկեք համաձայնենք՝ շատ հաճախ աշխատավարձին նայում ենք որպես պարզապես «մինչեւ ամսվա վերջ դիմանալու» միջոց: Արդյունքում՝ եկամուտն աճում է, բայց դրա հետ մեկտեղ նույն արագությամբ աճում են նաեւ ծախսերն ու պարտավորությունները, իսկ ֆինանսական կայունությունն այդպես էլ հեռվում է մնում:

Փողի արդյունավետ կառավարումը սկսվում է հենց այն պահին, երբ աշխատավարձի յուրաքանչյուր դրամը ստանում է իր հստակ դերը՝ ընթացիկ ծախսեր, ֆինանսական պահուստ, նպատակային խնայողություն կամ երկարաժամկետ ներդրում:

Ինչո՞ւ է կարեւոր աշխատավարձ ստանալու բանկը

Աշխատավարձային քարտը հաճախ ընկալվում է պարզապես որպես գումար ստանալու եւ կանխիկացնելու միջոց: Սակայն աշխատավարձային փաթեթները կարող են ազդել նաեւ քարտի սպասարկման ծախսերի, կանխիկացման, խնայողությունների,

վարկավորման եւ հիփոթեքի պայմանների վրա:

Բանկ ընտրելիս արժե դիտարկել՝

քարտի տրամադրման եւ սպասարկման վճարները,

կանխիկացման պայմանները,

խնայողական հաշվի տոկոսադրույքը,

վարկային եւ հիփոթեքային արտոնությունները,

ծառայությունները հեռավար կառավարելու հնարավորությունը:

Առանձին վերցրած այս առավելություններ կարող են փոքր թվալ, սակայն միասին ձեւավորում են աշխատավարձի կառավարման ամբողջական համակարգ:

Երբ աշխատավարձը սկսում է աշխատել նաեւ ձեզ համար

Այս մոտեցման օրինակ է IDBank-ի IDsalary աշխատավարձային փաթեթը, որը նախատեսված է IDBank-ի միջոցով աշխատավարձ ստացող կամ ստանալ նախատեսող հաճախորդների համար:

Ի՞նչ առավելություններ է առաջարկում փաթեթը՝

Անվճար պրեմիում դասի քարտ - տրամադրվում է փաթեթի շրջանակում (տեսակը կախված է աշխատավարձի չափից):

Քեշբեք եւ բոնուսներ պրեմիում քարտերին:

Կանխիկացման արտոնյալ պայմաններ:

Վարկի մրցակցային տոկոսադրույք:

Վարկային գիծ - մինչեւ 55-օրյա արտոնյալ ժամկետով:

Վարկային սահմանաչափ - մինչեւ զուտ աշխատավարձի 15-ապատիկի չափով (առավելագույնը՝ 10,000,000 ՀՀ դրամ):

Ավելի ցածր տոկոսադրույք հիփոթեքային վարկի համար - 0.25 տոկոսային կետով ցածր IDBank-ի գործող հիփոթեքի տոկոսադրույքից:

Հավելյալ տոկոսադրույք ավանդին/հաշվին - +0.5 տոկոսային կետով բարձր դրամային խնայողական հաշվի տոկոսադրույքին:

Անվճար ArCa քարտ - ամսական մինչեւ 60,000 ՀՀ դրամ քեշբեքի հնարավորությամբ:

Ջեղչ պահատեղերի համար - 20% զեղչ անհատական պահատեղի վարձակալության համար:

Անվճար սպասարկում - փաթեթի միացումն ու ամսական սպասարկումն անվճար են:

Եւ այլ առավելություններ:

Ֆինանսական կարգապահությունը միայն տնտեսելը չէ

Խնայողությունը չի նշանակում հրաժարվել բոլոր ցանկություններից: Այն նշանակում է ֆինանսական որոշումները դարձնել կանխատեսելի:

Երբ մարդը գիտի իր պարտադիր ծախսերի չափը, աշխատավարձի ստացման պահին գումար է առանձնացնում խնայողության համար եւ վարկային միջոցներն օգտագործում է միայն հստակ նպատակի դեպքում, ֆինանսական կառավարումը դառնում է ավելի հավասարակշռված:

Խոշոր գնում կամ վարկային պարտավորություն ստանձնելիս կարեւոր է գնահատել ոչ միայն ամսական վճարը, այլեւ ամբողջական արժեքը եւ դրա ազդեցությունը ընտանեկան բյուջեի վրա: Նույն կերպ խնայողության դեպքում արժե ընտրել գործիք, որը թույլ կտա ոչ միայն պահպանել, այլեւ ավելացնել ազատ միջոցները:

Այսպիսով՝ աշխատավարձը դադարում է լինել պարզապես ամսական մուտք եւ կարող է դառնալ ամենօրյա վճարումները, խնայողությունները, վարկավորումն ու ապագայի ծրագրերը միավորող ֆինանսական գործիք:

010593333 | idbank.am

IDBANK-Ը ՎԵՐՀԱՏՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՄԵՆԱՄՅԱ ԹՈՒՄՈ ՃԱՄԲԱՐԸ

31 օգոստոսի, 2026 թ., Երեւան. Հայաստանի եւ աշխարհի տարբեր երկրների հարյուրավոր դպրոցականների համար ամառը դարձավ նոր գիտելիքների, տեխնոլոգիական հմտությունների եւ նոր ընկերների ձեռքբերման հնարավորություն. Team Telecom Armenia-ի աջակցությամբ Հայաստանում անցկացվեց Թումո ճամբար 2026-ը:

Վեց հագեցած շաբաթների ընթացքում ճամբարը միավորել է 15 երկրից եւ Հայաստանի սահմանամերձ համայնքներից, այդ թվում՝ Արցախից տեղահանված ավելի քան 200 պատանիների՝ ստեղծելով միջավայր, որտեղ մասնակիցները տեխնոլոգիական կրթությունը համատեղել են որակյալ ժամանցի հետ:

«Մեզ համար կարեւոր է, որ տեխնոլոգիական կրթության հնարավորությունները հասանելի լինեն հնարավորինս շատ պատանիների՝ անկախ նրանից, թե որտեղ են նրանք ապրում: Մեր ռազմավարական գործընկերոջ՝ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի այս ճամբարային նախագիծը հենց այնպիսի միջավայր է ստեղծում, որտեղ միավորվում են կրթությունը, ստեղծարարությունը, նոր փորձառություններն եւ տարբեր երկրներից ժամանած պատանիների շփումը: Ուրախ ենք մեր աջակցությամբ նպաստելու, որ այս փորձառությանը մասնակցեն նաեւ Հայաստանի սահմանամերձ համայնքների եւ Արցախից տեղահանված ընտանիքների երեխաները: Վստահ ենք՝ նման ծրագրերը կարող են ոչ միայն նոր հմտություններ փոխանցել, այլեւ ոգեշնչել պատանիներին՝ իրենց ապագան կապելու

տեխնոլոգիաների եւ նորարարության հետ»,-նշում է Team Telecom Armenia-ի հասարակայնության հետ կապերի ղեկավար Գրիգորի Յուրինը:

Ճամբարի ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել զարգացնելու իրենց հմտությունները Թումոյի կրթական ուղղություններով՝ ուսումնասիրելով տեխնոլոգիաների, դիզայնի եւ ստեղծարարության տարբեր ոլորտներ: Կրթական ծրագրին զուգահեռ պատանիների համար կազմակերպվել են նաեւ մշակութային, ճանաչողական եւ ժամանցային միջոցառումներ՝ Հայաստանի պատմամշակութային վայրերի ու տեսարժան անկյունների բացահայտումից մինչեւ սպորտային եւ թիմային ակտիվություններ:

Ճանաչողական այցերի շրջանակում ճամբարականներն այս տարի եւս հյուրընկալվել են Team-ի Կապի թանգարանում եւ դատա կենտրոնում՝ ծանոթանալով Հայաստանում կապի զարգացման պատմությանն ու տեխնոլոգիական էվոլյուցիային:

«Team-ի հետ մեր ռազմավարական գործընկերությունը չափազանց արժեքավոր է մեզ համար: Այս աջակցության շնորհիվ կարողանում ենք ամառային թումոյական փորձառությունը հասանելի դարձնել սահմանամերձ համայնքների եւ Արցախից տեղահանված ավելի շատ պատանիների: Սա կարեւոր ներդրում է այս երեխաների ու պատանիների ապագայում, եւ մենք վստահ ենք, որ մեր համագործակցությունը շարունակական կլինի՝ ժամանակի ընթացքում էլ ավելի ընդլայնելով իր ազդեցությունը»,-նշում է Թումոյի ամառային ճամբարի ղեկավար Լաուրա Բարխուդարյանը:

Team-ը, հավատարիմ լինելով իր ռազմավարությանը, շարունակելու է աջակցել երիտասարդների տեխնոլոգիական կրթությանը:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Teaշ-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Teaշ Teleձoշ Arշenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

COP17

ԱՇԽԱՐՀԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ԿՀԱՎԱՔՎԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերին Հայաստանը հայտնվելու է միջազգային բնապահպանական օրակարգի կենտրոնում. Երեւանում կանցկացվի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը՝ COP17-ը: Միջոցառումը կանցկացվի հոկտեմբերի 19-ից 30-ը, իսկ բարձր մակարդակի բացման արարողությունը նախատեսված է հոկտեմբերի 18-ին: Համաժողովին զուգահեռ Երեւանում կանցկացվեն նաեւ Կենսաանվտանգության մասին Կարթագենայի արձանագրության կողմերի 12-րդ եւ Նագոյայի արձանագրության կողմերի 6-րդ հանդիպումները:

Այսպիսով, ավելի քան տասը օր շարունակ Երեւանը դառնալու է այն հարթակը, որտեղ տարբեր երկրներ, միջազգային կառույցներ եւ տեղական համայնքների ներկայացուցիչներ ու այլ շահագրգիռ կողմեր քննարկելու են աշխարհում կենսաբազմազանության պահպանության եւ բնության կորստի դեմ պայքարի հետագա քայլերը: Համաժողովի բացման ընթացքում նախատեսվում է նաեւ տարածաշրջանային խմբերի եւ տեղական համայնքների ներկայացուցիչների ելույթներ:

Բայց COP17-ը միայն բնապահպանական համաժողով չէ: Երեւանի օրակարգում լինելու են հարցեր, որոնք առնչվում են պետությունների ֆինանսական քաղաքականությանը, գյուղատնտեսությանը, առողջապահությանը, կլիմայի փոփոխությանը, տեխնոլոգիաներին, բիզնեսին եւ նույնիսկ նորագույն գիտական զարգացումներին:

Գլխավոր հարցերից մեկը լինելու է ֆինանսը: Համաժողովում քննարկվելու է կենսաբազմազանության պահպանության համար անհրաժեշտ ֆինանսավորման հարցը: Գործող ռազմավարությունը նախատեսում է մինչեւ 2030 թվականը լուծել կենսաբազմազանության ֆինանսավորման գլոբալ բացը, այդ թվում՝ ֆինանսական մեխանիզմների կատարելագործման եւ տարբեր աղբյուրներից ֆինանսավորման ավելացման միջոցով: Քննարկվելու են նաեւ համաշխարհային կենսաբազմազանության ֆինանսավորման արդյունավետության խոչընդոտներն ու ներդրողների շրջանակի ընդլայնման հնարավորությունները:

Այս համատեքստում կարեւոր է նաեւ ֆինանսական մեխանիզմների հարցը. COP17-ում նախատեսվում է որոշում ընդունել Գլոբալ միջավայրի հիմնադրամի եւ Գլոբալ կենսաբազմազանության շրջանակային հիմնադրամի ֆինանսավորման, ֆինանսական կարիքների գնահատման եւ գործող ֆինանսական մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ:

Երեւանում քննարկվելու է նաեւ, թե աշխարհը որքանով է կատարում մինչ այժմ ստանձնած պարտավորությունները: COP17-ի առանցքային գործընթացներից մեկը լինելու է Կունմին-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի իրականացման առաջընթացի առաջին գլոբալ վերանայումը: Այն հիմնվելու է երկրների ազգային զեկույցների, համաշխարհային զեկույցի եւ ազգային կենսաբազմազանության ռազմավարությունների ու գործողությունների ծրագրերի վերլուծության վրա:

Այսինքն՝ Երեւանում երկրները ոչ միայն նոր պայմանավորվածություններ են քննարկելու, այլեւ փորձելու են հասկանալ՝ ինչ է իրականում արվել նախկինում ընդունված նպատակները կյանքի կոչելու համար: Գլոբալ վերանայման արդյունքում կարող են նաեւ բացահայտվել այն խնդիրներն ու խոչընդոտները, որոնք խանգարում են պետություններին կատարել իրենց պարտավորությունները:

Առանձին մեծ թեմա է լինելու կենսաբազմազանության եւ կլիմայի փոփոխության կապը: Քննարկվելու են էկոհամակարգերի միջոցով կլիմայի փոփոխությանը հարմարվելու եւ աղետների ռիսկերի նվազեցման մոտեցումները, ինչպես նաեւ Ռիոյի կոնվենցիաների շրջանակում քաղաքականությունների եւ միջազգային համագործակցության համահունչեցումը:

Օրակարգում է նաեւ գյուղատնտեսությունը: Քննարկվելու են հողի կենսաբազմազանության եւ հողի առողջության պահպանությունը, աղտոտման դեմ պայքարը, միասնական մեթոդաբանությունների եւ ցուցանիշների կիրառումը, ինչպես նաեւ գյուղատնտեսական համակարգերի վրա աղտոտման ազդեցությունը նվազեցնելու միջոցները:

Երեւանում խոսվելու է նաեւ կենդանական աշխարհի կայուն կառավարման մասին: Նախատեսվում է քննարկել տարբեր տեսակների եւ տարբեր պրակտիկաների նկատմամբ կիրառելի գլոբալ ուղեցույցներ՝ շեշտը դնելով մասնակցային որոշումների կայացման, տարբեր գիտելիքների համակարգերի ներառման, իրավունքների ճանաչման եւ ծախսերի ու օգուտների արդար բաշխման վրա:

COP17-ը նաեւ գիտության եւ տեխնոլոգիաների հարթակ է լինելու: Օրակարգում ընդգրկված է սինթետիկ կենսաբանությունը, որի շրջանակում քննարկվելու են նոր տեխնոլոգիաների հնարավոր օգուտներն ու ռիսկերը, տեխնոլոգիաների հասանելիությունը, գիտելիքի փոխանակումը եւ զարգացող երկրների կարողությունների զարգացումը:

Առանձին ուշադրություն է դարձվելու նաեւ բիզնեսին եւ կենսաբազմազանությանը: Համաժողովի փաստաթղթերում արդեն ներառված է բիզնեսի ազդեցության եւ բնությունից ստացվող ծառայություններից կախվածության վերաբերյալ գնահատականը, որի հիման վրա նույնպես նախատեսվում է որոշումների ընդունում:

Իսկ այն հարցին, թե ինչպես է «ամբողջ աշխարհը միավորվելու» Հայաստանում, պատասխանը հենց COP17-ի ձեւաչափն է: Տարբեր պետություններ Երեւանում մեկ սեղանի շուրջ են քննարկելու ոչ միայն բնության պահպանության ընդհանուր խնդիրները, այլեւ դրանց ֆինանսավորման, գիտական համագործակցության, տեխնոլոգիաների, տեղական համայնքների, քաղաքների եւ բիզնեսի ներգրավման հարցերը: Օրակարգում նույնիսկ առանձին ուղղությամբ նախատեսվում է քննարկել քաղաքների, տեղական իշխանությունների եւ այլ ենթազգային կառույցների դերը Կունմին-Մոնրեալի շրջանակի իրականացման գործում:

Հայաստանի համար սա նշանակում է, որ հոկտեմբերին Երեւանը ոչ միայն ընդունելու է միջազգային պատվիրակությունների, այլեւ դառնալու է գլոբալ բնապահպանական որոշումների մշակման վայր: Բարձր մակարդակի հատվածը նախատեսված է հոկտեմբերի 27-28-ին, իսկ համաժողովը նախատեսվում է փակել հոկտեմբերի 30-ին:

Թե ինչ կոնկրետ որոշումներ կկարողանան ընդունել պետությունները, որքան ֆինանսավորում կուղղվի կենսաբազմազանության պահպանությանը, եւ արդյոք Երեւանում ձեռք բերված պայմանավորվածությունները կվերածվեն իրական գործողությունների, ցույց կտա արդեն COP17-ի արդյունքը: Բայց մեկ բան արդեն հստակ է՝ հոկտեմբերին Հայաստանի մայրաքաղաքը ավելի քան տասը օր լինելու է աշխարհի բնապահպանական օրակարգի կենտրոնում:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ՀՀ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանը «COP17. Հայաստանի ճանապարհը դեպի կենսաբազմազանության համաժողով» թեմայով բանախոսության ընթացքում ներկայացրել էր Հայաստանի՝ որպես ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17) հյուրընկալող եւ նախագահող երկրի դերակատարությունը, ինչպես նաեւ նախագահության ռազմավարական առաջնահերթություններն ու ներառական համաժողովի ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

2026 թվականի հոկտեմբերին Երեւանում կայանալիք COP17-ին նախատեսվում է Կոնվենցիայի 196 կողմերի ներկայացուցիչների մասնակցությունը: Համաժողովին նախորդելու է նաեւ Առաջնորդների գագաթնաժողովը:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՖԱՍԹ ԲԱՆԿԸ ԽԱՂԱՐԿՈՒՄ Է 5 ՀԱՏ IPAD

Ֆասթ Բանկը խաղարկում է 5 հատ iPad A16, 128 GB Wi Fi մրցանակը: Ֆասթ Բանկի բոլոր քարտապանները՝ անկախ քարտատեսակից, մինչեւ սեպտեմբերի 30-ը գնումներ կատարելով Yerevan Mall-ի վաճառակետերից՝ հնարավորություն ունեն շահել 5 iPad-ներից մեկը եւ մինչեւ սեպտեմբերի 7-ը՝ նաեւ ստանալ Բանկի պատրաստած 500 նվերներից մեկը:

Ֆասթ Բանկի խաղարկությանը կարող են մասնակցել բոլոր այն քարտապանները, որոնք վերը նշված ժամանակահատվածում Yerevan Mall-ի վաճառակետերից կկատարեն հանրագումարային 30,000 ՀՀ դրամի անկանխիկ գնումներ: Հավելենք նաեւ, որ յուրաքանչյուր քարտապան՝ անկախ քարտերի քանակից, կարող է ստանալ մասնակցության միայն մեկ կոդ, որը կուղարկվի արշավի ավարտից հետո: Խաղարկությունն ամփոփվելու է Ֆասթ Բանկի Youtube-յան էջում, օրը եւ ժամը



կհրապարակվեն Բանկի պաշտոնական սոցիալական հարթակներում (FB, Insta, LI):

Ֆասթ Բանկի քարտապանները, ինչպես նշվել է, հնարավորություն ունեն նաեւ ստանալ Բանկի պատրաստած 500 նվերներից մեկը: Գնումներից հետո քարտապաններն առնվազն 30,000 ՀՀ դրամի անկանխիկ գնումները հավաստող կտրոնով կարող են մոտենալ Yerevan Mall-ում տեղեկատվական տաղավարին կից տեղակայված Ֆասթի բրենդավորված կետ եւ ստանալ նվերային փաթեթ, որը ներառում է Ֆասթի բրենդավորված դպրոցական պայուսակ եւ գրենական պիտույքների հավաքածու: Հավելենք նաեւ, որ նվերների քանակը սահմանափակ է եւ տրամադրվում են ըստ հերթականության՝ մինչեւ դրանց սպառումը:

Ֆասթ Բանկը շարունակաբար ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ առաջարկելով 24/7 արագ, հարմարավետ եւ անվտանգ ֆինանսական լուծումներ Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

● *Խամաճիկների պետական թատրոնում սեպտեմբերի 5-ին՝ ժամը 12:30-ին, կկայանա «Անբան Հուռին» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է անցկացվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի վիճակահանությունը:

Սուրեն Լեւոնյան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ մասերի համաձայն հայտարարված զորակոչի շրջանակներում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներին հանրապետական հավաքակայանում կենտրոնացված ձեւով եւ վիճակահանությամբ (բացառությամբ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված քաղաքացիների) ըստ զորամասերի ծառայության նշանակման գործընթացն իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Հանրապետական հավաքակայանում ուսումնասիրվում են հանրապետական հավաքակայան ներկայացված քաղաքացիների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 31-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների առկայությունը, ինչպես նաեւ առողջական վիճակը, որի արդյունքներով անհրաժեշտ փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների ոչ լիարժեք լինելու կամ քաղաքացու առողջական վիճակը զորակոչվելու համար խոչընդոտ հանդիսանալու դեպքում քաղաքացին կարող է վերադարձվել տարածքային ստորաբաժանում:

Պարտադիր զինծառայողների՝ ըստ զորամասերի ծառայության նշանակվելուց հետո զինված ուժերի գլխավոր շտաբի անձնակազմի կառավարման գլխավոր վարչության համապատասխան տարածքային տարածքային ստորաբաժանումներ է ուղարկում զորակոչված անձանց անվանացուցակը՝ նշանակված զորամասերի պայմանական համարների գրառումներով: Ստացված անվանացուցակները տարածքային ստորաբաժանումներն անհապաղ փակցնում են քաղաքացիների համար տեսանելի վայրերում:

ՀՀ ՊՆ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղվող (բռնագանձվող) ամենամսյա գումարի չափը:

Վահագն Սարգսյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը:

ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝ 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
Միասնական սոցիալական ծառայություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արտակարգ իրավիճակ Երեւանում. հերթական անգամ անձրեւի պատճառով Գյուրջյան փողոցը վերածվել է Վենետիկի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 17 + 19 + 24
Կոտայքի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
Կոտայքի նախալեռներ	+ 13 + 15 + 24 + 27
Գեղարքունիք	+ 7 + 11 + 17 + 21
Լոռի	+ 9 + 13 + 19 + 23
Տավուշ	+ 9 + 13 + 20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
Արագածոտնի նախալեռներ	+ 12 + 16 + 23 + 28

Արարատ	+ 14 + 17 + 26 + 29
Արմավիր	+ 14+ 17 + 27 + 30
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 + 16 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 18 + 27 + 30
Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 13 + 16
Սյունիքի նախալեռներ	+ 9 + 12 + 17 + 21
Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 24 + 28
Երեւան	+ 15 + 17 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.08.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*